



### Գ. ԿԻՐԱԿԻ ՅԻՆԱՆՑ: Աշխարհամատրան, Կանաչ Կիրակի (ճաշոց էջ 254)



#### ԺԱՄԱՄՈՒՏ

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն, իր մահովը մահը խորտակեց եւ իր յարութեամբը մեզի կեանք պարգեւեց. յաւիտենապէս փա՛ռք Ասոր. ամէն:

#### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ - ՅԱՐՈՒԹԵԱՆ ԴՉ

Քրիստոս թագաւոր, Յօր եւ Յոգւոյն Էակից, որ մեզի համար մարմնացար սուրբ Կոյսէն, փառքի թագաւոր Քրիստոս, փառք Զեզի:

Որ կամաւոր մահով մահը խորտակեցիր եւ անապական յարութեամբդ աշխարհը նորոգեցիր, փառքի թագաւոր Քրիստոս, փառք Զեզի:

Որ Զու կենարար արիւնովդ լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին, հրեշտակներուն հետ Զեզի կ'երգենք ըսելով՝ փառքի թագաւոր Քրիստոս, փա՛ռք Զեզի:

## **ՄԵՍԵՂԻ (Սղ. 43, 2 , 44,2 եւ 45,2)**

Աստուած իմ, մեր սեփական ականջներով լսեցինք այն բաներու նկարագրութիւնը, զոր մեր հայրերը մեզի պատմեցին:

Սիրտս ուրախութեան արտայայտութիւններով կը յորդի, ամէն ատեն, որ թագաւորին առջեւ կրնամ պատմել իմ գործերս:

Աստուած՝ մեր ապաւենն ու զօրութիւնըն է, մեզի ինքը կ'օգնէ մեր նեղութիւններուն մէջ, որոնք ներկայիս մեր վրայ եկած՝ կը ճնշեն:

## **ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՊԵՏՐՈՍ ԿՈՒՆԵԼԻՈՍԻ ՏՈՒՆԸ**

**Առաքելներուն Գործերէն Է այս ընթերցուածը:  
(Գ. Առք. 10.1-24)**

Կեսարիոյ մէջ մարդ մը կար Կուռնելիոս անունով, հարիւրապետ՝ Իտալական գունդին: Աստուածապաշտ եւ աստուածավախ ինչպէս նաեւ իր ընտանիքը. ան բազմաթիւ բարեգործութիւններ կ'ըներ ժողովուրդին եւ միշտ կ'աղօթէր Աստուծոյ: Տեսիլքի մը մէջ, օրուան իններորդ ժամուն, յայտնապէս տեսաւ որ Աստուծոյ հրեշտակը իր տունը կը մտնէր եւ կ'ըսէր իրեն. «Կուռնելիոս»: Կուռնելիոս անոր նայելով եւ սաստիկ վախցած՝ հարցուց. «Ի՞նչ է, Տէ՛ր»: Զրեշտակը պատասխանեց. «Քու աղօթքներդ եւ քու ողորմութիւններդ ելան Աստուծոյ առջեւ եւ Աստուած քեզ յիշեց: Զիմա մարդ զրկէ Յորբէ եւ կանչել տուր Սիմոնը, որ կոչուած է Պետրոս: Իջեալած է Սիմոն կաշեգործի մօտ, որուն տունը կը գտնուի ծովեզերք»: Երբ հետը խօսող հրեշտակը մեկնեցաւ, Կուռնելիոս կանչեց երկու սպասաւորներ եւ աստուածապաշտ զինուոր մը՝ իր տան ծառայութեան յատկացուած, պատմեց անոնց

ամէն բան ու զրկեց զանոնք Յորբէ: Պետրոս տակաւին կը խորհէր տեսիլքին մասին, երբ Զոգին ըսաւ իրեն. «Ահաւասիկ մարդիկ քեզ կը փնտռեն, իջիր եւ գնա՛ անոնց հետ առանց վարանելու, որովհետեւ ես զրկեցի զանոնք»: Պետրոս իջաւ մարդոց քով եւ ըսաւ անոնց. «Ահաւասիկ ես եմ անձը, զոր կը փնտռէք եւ ի՞նչ պատճառով եկած էք»: Անոնք պատասխանեցին. «Կուռնելիոս հարիւրապետը, արդար եւ աստուածավախ մարդ, որուն մասին ամբողջ Զրեայ ժողովուրդը լաւ վկայութիւն կու տայ, սուրբ հրեշտակէն պատուէր ստացաւ քեզ իր տունը կանչել եւ քեզմէ լսել ինչ որ խօսելիք ես անոր»: Պետրոս զանոնք ներս կանչեց եւ հիւրասիրեց: Յաջորդ օրը ճամբայ ելաւ եւ գնաց անոնց հետ: Յորբէի եղբայրներէն ոմանք հետը գացին: Զետեւեալ օրը մտան Կեսարիա, ուր Կուռնելիոս կը սպասէր անոնց եւ համախըմբած էր իր ազգականներն ու մտերիմ բարեկամները:

### **Ալէլուիա, Ալէլուիա,**

Ո՛րվ Երուսաղէմ, դուն Տէ՛րը օրինէ: Եւ դուն ալ ո՛րվ Սիոն, քու Աստուածդ օրինէ:  
(Սղմ.147,1-2)

### **Ալէլուիա:**

## **ԱԻԵՏԱՐԱՆ**

**ՆԻԿՈՂԵՄՈՍ ԱՇՎԿԵՐՏ ՅԻՍՈՒՍԻ (Յովհ.2,23-3,12)**

Մինչ Երուսաղէմ կը գտնուէր Չատիկի տօսին, շատեր հաւատացին իր անու-

նին՝ տեսնելով նշանները, զորս կը գործէր: Բայց ինք չէր վստահէր անոնց,

որովհետեւ կը ճանչնար ամենքը եւ կարիք չկար որ մէկը վկայէր մարդու մասին: Ինք լաւ գիտեր մարդուն սիրտը:

Փարիսեցիներուն մէջ մարդ մը կար, Յրեաներու իշխան եւ որու անունն էր Նիկողէմոս: Գիշերանց Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ. «Ռաբբի, գիտե՞նք, թէ Աստուծո՞ւմէ եկած վարդապետ մըն էս, որովհետեւ ոչ ոք կրնայ գործել այն նշանները, զորս դուն կը գործես, եթէ Աստուած անոր հետը չըլլայ»: Յիսուս պատասխանեց անոր. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, ոչ ոք, եթէ վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»: Նիկողէմոս ըսաւ. «Ի՞նչպէս մարդ կրնայ ծնիլ, երբ արդէն ծեր է: Կարելի բա՞ն է որ վերստին մօր արգանդը մտնէ եւ ծնի»: Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, ոչ

ոք, եթէ չծնի ջուրէն եւ Յոգիէն, չի կրնար Աստուծոյ Արքայութիւնը մտնել: Մարմինէն ծնածը մարմին է, Յոգիէն ծնածը՝ հոգի. Դուն մի՛ գարմանար, եթէ ըսի քեզի. 'Պետք է որ վերստին ծնի՞ք': Յովը կը փչէ ուր որ ուզէ, դուն կը լսես իր ձայնը, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Այսպէս են նաեւ անոք, որոնք ծնած են Յոգիէն»: Նիկողէմոս ըսաւ. «Ի՞նչպէս կրնայ ըլլալ ասիկա»: Յիսուս պատասխանեց. «Դուն հարայելի վարդապետ ես, կ'անգիտանա՞ս այս բաները: Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, մենք կը խօսինք ինչ որ գիտենք, կը վկայենք ինչ որ տեսանք, բայց դուք չէք ընդունիր մեր վկայութիւնը: Եթէ չէք հաւատար երբ երկրաւոր բաներ կ'ըսեմ ձեզի, ի՞նչպէս պիտի հաւատաք, երբ երկնային բաներ ըսեմ ձեզի...»:

## ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Ժառանգելու համար Աստուծոյ Արքայութիւնը, հարկ է վերածնիլ ջուրէն ու Յոգիէն: Այս է պատգամը Աւետարանի հատուածին, որ կը պատմէ Յիսուսի հանդիպումը Նիկողէմոսի հետ:

Չատկուայ տօնին, Յիսուս բարձրացաւ Երուսաղէմ: Հոն կը գտնուէր ուխտաւորներու հոծ բազմութիւն մը, որ ականատես էր Յիսուսի հրաշքներուն: Կարծիքները բազմացան Անոր անձին շուրջ: Շատեր հաւատացին Անոր Անունին ու հետեւեցան, ոմանք փափաքեցան խորանալ Րաբբի Յիսուսին խօսքերուն մէջ, որովհետեւ Ան տարբեր էր ուրիշներէն, կը սորվեցներ իշխանութեամբ եւ թափանցիկութեամբ:

Փարիսեցի Նիկողէմոս, հրեայ իշխանը, թերեւս իր բարեկամներուն պահանջքին վրայ եւ կարգ մը խորհրդաւոր հարցերու շուրջ յստակ բացատրութիւններ ստանալու համար, գիշերը, գաղտնի եւ ծպտուած՝ ներկայացաւ Յիսուսի: Խօսակցութիւնը սկսաւ յոգնակի ու խոստովանեցաւ Յիսուսին

Աստուծոյ կողմէ առաքուած ըլլալը, որովհետեւ հրաշքները, զորս Ան գործեց, պիտի չկատարուէին, եթէ Աստուած չըլլար Անոր հետ:

Խօսակցութիւնը դարձաւ երկու մակարդակներու վրայ. աստուածային եւ մարդկային: Իւրաքանչիւրը ուներ իրեն յատուկ ոճը, մտածելակերպն ու տեսանկիւնը փրկչագործութեան դէպքին նկատմամբ եւ յանձնառութիւնը անոր հանդէպ:

Ա.- Նիկողէմոս, գիտակից ու անկեղծ փարիսեցի հովուապետը, կը փափաքէր գիտնալ ճշմարտութիւնը այդ ուսուցիչին, որուն հայրն ու մայրը ճանչցուած էին բոլոր հրեաներուն կողմէ եւ որուն ուսուցումը չէր բացաւորուէր մարդկային չափանիշերով: Այս էր վեճին դրդապատճառը: Նիկողէմոս երբ ներկայացաւ Յիսուսի, կը խարխափէր խաւարի մէջ: Ան յանդուգն քայլ մը առաւ, սակայն վարանոտ ու սանձուած, իր ընկերային ու կրօնական դիրքին պատճառաւ: Ան գամուած էր կարճատեսութեամբ ու

նեղմտութեամբ, առանց լաւին, կատարեալին ու գեղեցիկին ձգտումի: Անոր մտածումին առանցքն էին նիւթն ու ժամանակը: Անկէ մեկնելով ան անմիջական ու դիւրիմաց մօտեցումով մեկնաբանեց Վարդապետին խօսքերը, մօտեցում մը, որ ոչ մէկ կապ ունէր Յիսուսի նպատակին հետ, այլ հակառակը խոչընդոտ կը յարուցանէր հոգեպէս վերածնելու ձգտումին առջեւ, որ ուժ կ'ապահովէր՝ ձերբազատելու նիւթէն ու անոր արդիւնքներէն:

Բ.- Յիսուս տարբեր լեզուով խօսեցաւ Նիկոդէմոսին, հոգեւոր խորքով ու դրական հաստատումով մը. «Ամէն, Ամէն...»: Ան շեշտեց, թէ Աստուծոյ Արքայութեան տեսանելիութիւնը ունի ապշեցուցիչ ու արտակարգ պայմաններ. Մարդը չի կրնար անտեսանելիի պատը յաղթահարել ինքնիր մարդկային ոյժերով: Ով որ կը փափաքի վերածնիլ՝ գերբնական տրամաբանութեամբ միայն կրնայ հասնիլ նպատակին. Վերէն կու գայ լոյսն ու կեանքը:

Մարդը որ մէկ անգամ աշխարհի կու գայ՝ ինքզինք կը գտնէ երկընտրանքի մը դիմաց. կա՛մ ենթարկուելու է նիւթի ու ոսկորի ոլորտին, ուր ամէն բան տեսանելի ու սահմանափակ է, կա՛մ

հետազօտելու է ու խոկալու, գտնելու համար վերածնունդ մը, տո՛ր եւ տարբեր՝ կեանքի մը: «Ձուրով եւ Յոգիով» վերածնունդը, զոր Յիսուս շեշտեց ակնարկելով Մկրտութեան Ս. Խորհուրդի անհրաժեշտութեան, մարդուն դիմաց կը բանայ ազատ ու ընդարձակ հորիզոններ, բոլորովին ներհակ օրէնքի եւ արեան հորիզոններուն: Արքայութիւնը, որ պատրաստուած է մեզի համար, որուն հրաւիրուած ենք մասնակցելու եւ որուն հոգեպէս կը ձգտինք, կը գերազանցէ մեր մարդկային կարողութիւնն ու ակնկալութիւնները:

Մենք Զրիստոնեաներս, երանի՛ ձերբազատուիմք դէպի սրբութիւն մեր ցանկութիւնը սանձող արգելքներէն: Դիմենք Յիսուսի, Տէրը պատմութեան: Զեռու մնանք զուտ մարդկային ու հասարակ տրամաբանութիւններէ եւ եսասէր ու պատեհապաշտ միտումներէ: Փրկութիւնը մարդկային իմաստութեան արգասիքը չէ, այլ՝ հեռունէն եկող ու փչող Յով մըն է, վերէն ու հեռուները տանող: Ան մարդկային կարողութիւններէն վեր կը բարձրացնէ մեզ, հանգչեցնելու համար Ս. Երրորդութեան մէջ:

## ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

**Մարիա Բաֆֆի Սուրատեան՝** 11 Մարտ 2018 - Ս. Խաչ եկեղեցի  
**Գալին Վիգէն Աբրահամեան՝** 24 Մարտ 2018 - Ս. Խաչ եկեղեցի  
**Ջուլյալ Նեքթարիա Ջոզամեան՝** 8 Ապրիլ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի

## ՄԱՀԱԶԴ

**Մինա ճիպեան Տօրլիան՝** 22 Փետրուար 2018 - Ս. Գրիգոր Լուսաւորի-Ս. Եղիա եկեղեցի  
**Կարապետ Դաւիթեան՝** 5 Մարտ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի  
**Թրֆանտա Քէշքերեան՝** 5 Մարտ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի  
**Լուսնակ Առատեան՝** 7 Մարտ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի  
**Վիքթորիա Պաղտասարեան Թութուշեան՝** 9 Մարտ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի  
**Անտիս Տեմիրձեան՝** 8 Մարտ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի  
**Վարդգէս Պոզեան՝** 19 Մարտ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի  
**Ժանին Տաիտեան՝** 30 Մարտ 2018 - Ս. Գրիգոր Լուսաւորի-Ս. Եղիա եկեղեցի  
**Շահէ Սէօքիմեան՝** 2 Ապրիլ 2018 - Ս. Խաչ եկեղեցի  
**Արփիմէ Մոմձեան՝** 5 Ապրիլ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: [eparchy@armeniancatholic.org](mailto:eparchy@armeniancatholic.org)  
[www.armeniancatholic.org](http://www.armeniancatholic.org)